ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Փոխվարչապետի 2021 թվականի նոյեմբերի 4-ի 894-Ա որոշմամբ ստեղծված «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստ

ք.Երևան ժամը՝ 14:00
01.12.2021թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ն. Բուդոյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ,
Լ. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ,
Ն. Բակունց	առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ,
Ս. Բոստանչյան	աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ,
Ն. Մարգարյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի ավագ մասնագետ,
Ա. Թորոյան	բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության փորձագետ,
Թ.Աթայյան	արտակարգ իրավիճակների նախարարության ՔԾ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տարերային աղետների բաժնի մասնագետ,
Մ.Մոմջյան	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ,
Մ.Ավետիսյան	կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի երկրատարածական տվյալների կառավարման բաժնի պետ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավար ընտրելը:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

Նիստը վարում էր կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը, ով ներկայացրեց կլիմայական քաղաքականության ոլորտի իրավական շրջանակի, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային հանձնառությունների, կատարված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև կլիմայական բաղադրիչի ներդրման անհրաժեշտության մասին ոլորտային քաղաքականությունների մեջ: Քննարկվեց նաև աշխատակարգի հետ կապված հարցեր և նախանշվեցին խմբի գործունեության հետագա քայլերը: Որոշվեց խմբի հետագա աշխատանքներին ներգրավվել նաև ազգային և միջազգային ոլորտային փորձագետների: Մասնակիցների ձայների մեծամասնությամբ Ն.Բուդոյանն ընտրվեց որպես աշխատանքային խմբի ղեկավար:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ԲՈՒԴՈՅԱՆ

Արձանագրեց՝
Ա. Ղուկասյանը